նոյն վիճակին է ենթարկուում. նա եւս, թողնելով արքայական գահ ու գաւազանը, թողնելով իր երկրի կառավարութիւնը, սկսում է լեռներում ճգնաւորական կեանք վարել: Հայաստանի երկրորդ լուսաւորիչները, Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ, երկար մաքառելով ամենադժոարին արգելքների դէմ, եռանդով առաջ են տանում իրանց սկսած մեծ գործը: Բայց երբ դժբախտ հանգամանքները ծանրանում են եւ նրանց վրայ, նրանք եւս թողնում են աշխարհը եւ հեռանում են դէպի անապատը...

Ես կարող էի մեր պատմութիւնից շատ օրինակներ բերել, բայց այդքանն էլ բաւական է:

Այդ երեւոյթը նկատւում է մեր պատմութեան մէջ ոչ միայն անհատների վերաբերութեամբ, այլեւ ամբողջ անապատական ուխտերի եւ միաբանութիւնների վերաբերութեամբ, որոնք, ժամանակի հալածանքներից խուսափելով, որոնք այնքան ուժ չունենալով մաքառելու ժամանակի հարուածների դէմ, որոնք, անկարող լինելով փոխել, յեղաշրջել երկրի անբաւարար կարգերը, յուսահատութիւնից անձնատուր են լինում անապատական կեանքի: Եւ դրա մէջ պէտք է որոնել այդ պատմական երեւոյթների իսկական պատճառը, որ անապատների կառուցումները ըստ մեծի մասին եւ աւելի յաճախ տեղի են ունեցել նախընթաց պատահած մի շարք դժբախտութիւններից յետոյ:

Այդ երեւոյթը աւելի պարզ կերպով ցոյց տալու համար ես կը վերառնեմ մեր ամենամօտ ժամանակներից մի դարաշրջան եւ հէնց այն դարաշրջանը, որի մէջ կատարոել է իմ նկարագրած Կտուց անապատի հիմնարկութիւնը:

Տասնվեցերորդ դարու վերջերում յայտնւում է Շահ-Աբաս Մեծը, իսկ տասնեւեօթերորդ դարու սկզբում (1603 թ.) կատարւում է նրա առաջին կորստաբեր արշաւանքը դէպի Հայաստան: Մեր աշխարհը դառնում է արեան եւ կոտորածի մի սոսկալի հանդիսարան: Օսմանցիք մէկ կողմից, պարսիկները միւս կողմից, երկիրը բոլորովին աւերակ են դարձնում: Շահ-աբասը սրի եւ մտրակի ուժով Արարատեան նահանգից բազմաթիւ գերիներ վարում է դէպի Սպահան: Այդ բազմամարդ նահանգը իսպառ դատարկւում է բնակիչներից: Պարսիկների եւ օսմանցիների թերի թողած բարբարոսութիւնները լրացնում են Ջալալի կոչուած ելուզակները: Այդ ժամանակ յայտնւում են Քէօր-օղլին եւ Գզիր-օղլին: Յետոյ անմիջապէս մինը միւսին յաջորդում են մարախը, սովը եւ ժանտախտը: Պարսիկների եւ օսմանցոց սրից ու գերութիւնից ազատ մնացած բնակիչները մեռնում են սովից եւ ժանտախտից: Երկիրը ծածկւում է դիակներով: Մեռելոտիների ընտելացած գազան-